«ԼՐԱԲԵՐԸ» 80-ԱՄՅԱ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսը՝ ավագագույնը ակադեմիայի հասարակագիտական և հայագիտական պարբերականների մեջ, իր հայտնությամբ իսկ ավագ է մնում նաև մեր ակադեմիայի համեմատությամբ, իր գործունեությունը սկսելով նրանից երեք տարի առաջ՝ 1940 թվականի նոյեմբերից: Այն ժամանակ հանդեսը ԽՍՀՄ ԳԱ Հայկական բաժանմունքի (АрмФАН) պարբերական հրատարակությունն էր և լույս էր տեսնում «Տեղեկագիր հասարակական գիտությունների» անվամբ: 1966 թ. այն վերանվանվեց ներկայումս հարատևած՝ «Լրաբեր հասարակական գիտությունների»: Իր առաջին տասնամյակներին հանդեսը խմբագրվել է հայրենական գիտության այնպիսի ականավոր գործիչների կողմից, որպիսիք էին Ս. Կարապետյանը, Հ. Բատիկյանը, Հ. Օրբելին, Խ. Մոմջյանը, Մ. Ներսիսյանը, Ա. Հովհաննիսյանը, Գ. Ստեփանյանը, Հ. Ասլանյանը, Հ. Ինճիկյանը, Ծ. Աղայանը: 1972 թ. դեկտեմբեր-1987 թ. դեկտեմբեր ժամանակահատվածում հանդեսի խմբագիրն էր ակադ. Վ. Միքայելյանը, 1988-2017 թթ.՝ Ա. Խառատյանը: 2017 թ. ցայսօր «Լրաբերի» գլխավոր խմբագիրն է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Պ. Ավետիսյանը:

Ակադեմիական այս հրատարակության վաղ շրջանը (1940-1950-ական թթ.) աչքի է ընկնում հայրենական հայագիտության դասական և նշանավոր դեմքերի աշխատակցությամբ: Իրենց ուսումնասիրություններով ու հրապարակումներով հանդես են եկել Հ. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Ա. Տերտերյանը, Գ. Ղափանցյանը, Ա. Հովհաննիսյանը, Մ. Ներսիսյանը, Բ. Պիոտրովսկին և ուրիշներ: Գիտնականների այս սերունդը, միաժամանակ, աճեցնում և մուտք էր նախապատրաստում հետազոտողների նորանոր շարքերի համար, որոնք պատվով ու նախանձախնդրությամբ կատարեցին և շարունակում են կատարել իրենց առաքելությունը գիտության մեջ և «Լրաբերի» հյուրընկալությամբ:

«Տեղեկագրի», այնուհետև «Լրաբերի» հրապարակումների ծրագրային խնդիրն էր վեր հանել հայագիտական ու հասարակագիտական կարևոր հիմնահարցերը, լուսաբանել փիլիսոփայության, պատմության, տնտեսագիտության, գրականագիտության, լեզվաբանության առանցքային խնդիրները և տեսական հետազոտությունները համադրել գիտագործնական արդիական պահանջմունքներին՝ ընթանալով դրանց նոր ուղղությունների թելադրանքով: Հենվելով դասական հայագիտական ավանդույթներին՝ «Լրաբերն» այսօր ևս հաջողությամբ է իրականացնում դրանց կապերի ու շարունակականության ամրացումը՝ հանդես գալով նորովի հարցադրումներով և լուծումներով այն

մասնագիտական շրջանակներում, որտեղ ամփոփվում են գիտական լրագրության սահմանները: Հանդեսի կենսագրական ուղին աչքի է ընկնում գիտական հասունացած խնդիրների, հիմնահարցերի հետազոտման ընդարձակ շրջագծով, ընդսմին՝ ներառելով հայոց պատմության և մշակույթի բոլոր շրջանները՝ գիտականորեն համակարգված ժամանակագրությամբ, հայ և համաշխարհային պատմափիլիսոփայական մտքի դրսևորումների ու ընթացքի հետազոտությամբ, բանասիրական ու արվեստագիտական և առհասարակ մշակութային լուսաբանումներով: Գիտական պարբերականի ընթացքը, սակայն, չպետք է պատկերացնել իբրև միանշանակ, մշտապես հիացմունք կամ էյֆորիա ներշնչող կանխորոշված շարժում: Իրականում հանդեսն ունեցել է տեղատվության անխուսափելի պահեր, գիտական հասունացած հիմնահարցերի նկատմամբ ժամանակավրեպ անտեսումներ, գիտության և քաղաքականության փոխհարաբերություններում հօգուտ վերջինի՝ չհիմնավորված հակումներ, առանց որի, սակայն, հնարավոր չէ պատկերացնել գիտական որևէ պարբերական և այն էլ տասնամյակների իրարամերժ շարանի մեջ: «Լրաբերն» այս ամենը հաղթահարել է մեր գիտության զարգացմանը հատուկ տոկունությամբ և համառությամբ, որի շնորհիվ նրա էջերում ամեն մի սերունդ սեփական խոսքն է ասել իր առջև ծառացած հրամայականների ճանաչման և դրանց արժեքավորման ասպարեզում: Ժամանակի հետ հանդեսի հրապարակած նյութերում և, մասնավորապես, գիտությունը բնութագրող բնագավառում հայտնվեցին մի շարք նոր թեմաներ, ինչպես հայ ժողովրդի կազմավորման, նրա կրոնական մշակույթի և եկեղեցու պատմության, ազգային-ազատագրական շարժումների պատմափիլիսոփայության մշակումներ, հայոց ցեղասպանության և դրա հետևանքների արդիական իմաստավորումներ և այլն:

Ակադեմիական հրատարակությունների մեջ «Լրաբերն» առաջիններից մեկն էր, որ բազմակողմանի հիմնավորումներով մոտեցավ արցախյան հիմնահարցին՝ արժևորելով դրա նշանակությունը հայոց պետականության, ազգային-ազատագրական շարժումների, մշակույթի պատմության մեջ և ընթանալով թուրք-ադրբեջանական պատմակեղծարարների ագրեսիվ նկրտումները մերկացնելու ուղղությամբ: Եվ եթե այսօր արցախյան թեման առարկայական՝ ռազմաքաղաքական ոչ միանշանակ զարգացումների հետևանքով դառնում է առավել քան երբևէ արդիական, վերոհիշյալ հրատարակությունների, այդ թվում և հանդեսի գիտական հետաքրքրություններին անխուսափելիորեն սպասում են շատ ավելի լայնախոհ և բազմակողմանի մշակումներ: Սպասվում է նաև, որ Արցախյան տարածքները կլանելու իրողությունից ընդարմացած՝ պատմության կեղծարարները գործի կդնեն իրենց նսեմ զինանոցի հավելյալ

միջոցներ, որոնց դիմակայման խնդիրն առաջնահերթ կմնա ոչ միայն «Լրաբերի», այլև մեր բոլոր գիտական հրատարակությունների համար:

Տասնամյակների ընթացքում, և դարձյալ առաջինը ակադեմիական հանդեսների մեջ, «Լրաբերը» գիտական հիմնավոր կապեր հաստատեց արտերկրի հայ և օտարազգի հայագետների հետ՝ տպագրելով պատմաբանների, բանասերների, հայ միջնադարյան մշակույթի պատմությանը և այլնին վերաբերող նրանց ուսումնասիրությունները և դառնալով հայագիտական յուրահատուկ կամուրջ՝ նրանց և հայրենական գիտության միջև: Դրան նպաստեց հանդեսի գիտակազմակերպչական ուղղվածությունը՝ ճանաչելու հանրապետության և նրա սահմաններից դուրս շրջանառող գիտական արժեքավոր միտքն ու մտահղացումները՝ դրանց ընդառաջելու գործելակերպով: Այս չընդհատվող գործելակերպը, ի դեպ, այսօր էլ շարունակվում է մեր օրերի գիտական առօրյայի աննախընթաց բարդ և դժվարին ժամանակներում:

Հարկ է ուշադրություն դարձնել «Լրաբերի» էջերում գիտական լրագրության սկզբունքների մշակման ու իրականացման ավանդութային գործընթացին: Այս ասպարեզում կուզենայի արժանին հատուցել նրա երջանկահիշատակ խմբագիր, փայլուն անհատականությամբ օժտված պատմաբան, ակադեմիկոս Վարդգես Միքայելյանի գործունեությանը՝ հանդեսի նյութերի շրջանառության, ժանրային հստակ կարգավորման և մատուցման ասպարեզում: Դրա հիման վրա այսօր բարձրանում են հանդեսի բովանդակային ուղղվածությանը համապատասխան թեմատիկ և հիմնահարցային դասակարգումներն ու ընթացքը դեպի ընթերցող՝ նյութի փաթեթավորման խստիվ և հիմնավորված առաջարկներով:

Իր առջև դրված տարաբնույթ խնդիրների արդիական մեկնաբանությունն ու գնահատականը «Լրաբերն» իրականացնում է արխիվային ու փաստավավերագրական բազմաբովանդակ նյութի վերհանումներով: Դրա շնորհիվ մոռացությունից փրկվել և գիտական հասարակայնության սեփականությունն են դարձել դասական հայագիտության հանգուցային հարցերի, ինչպես և ականավոր դեմքերի անտիպ մնացած կամ քիչ լուսաբանված ուսումնասիրություններ, նրանց կենսագրությունն ու գործունեությունն ամբողջացնող արժեքավոր նյութեր և այլն: Դրանք ևս վկայում են, որ «Լրաբերի» գիտական նշանակությունը գնահատվում է նաև նրա բնագրային հրապարակումներով: Տարբեր տարիներին նրա հրապարակած աղբյուրագիտական հարուստ փաստաթղթերը, սկզբնաղբյուրի արժեք ունեցող հնագիտական նյութի գիտական իմաստավորումներն ու վավերացումները նրա էջերում՝ ներկայացնում են հանդեսի ամբողջական նկարագրի հատկանշական կողմերը:

Երկար կարելի է խոսել «Լրաբերի»՝ գիտական այդ արժանապատիվ հանդեսի ծանրաբեռն վաստակի և անցած ուղու մասին, ի վերջո, ութ տասնամյակը պատկառելի վաղեմություն և ընդհանրացման կարիք է նշանակում հատկապես իր կարճակեցությամբ աչքի ընկնող մեր պարբերական մամուլի պարագայում: Սակայն, և մենք կարող ենք ասել ամենայն համոզմունքով, որ «Լրաբերը» մեր գիտության համար թանկ և աշխույժով լեցուն այն «ծերուկներից» է, որոնք, ի հակադրություն հին գերիմաստության, միավորում են իմացականությունն ու ուժը, այսինքն՝ և՛ գիտեն, և՛ կարողանում են անել: Հարատևում ցանկանանք նրան և՛ մեկ, և՛ մյուս ասպարեզներում: Այս ամենով հանդերձ՝ ի սրտե շնորհավորում եմ նրա աշխատակազմին՝ գլխավոր խմբագիր Պավել Ավետիսյանին, գլխավոր խմբագրի տեղակալ Արսեն Բոբոխյանին, պատասխանատու քարտուղար Գայանե Հարությունյանին, փորձառու խմբագիրներ Մելանիա Միքայելյանին և Սեդա Քուփելյանին, օպերատոր Արմինե Պետրոսյանին, նաև հանդեսի խմբագրական խորհրդին և մեր ամբողջ գիտական հասարակայնությանը՝ այս հիշարժան հոբելյանի առթիվ:

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ